

ԵՐԵՍՓՈԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՆԱԽԱՐԱՐ ՕՀԱՆՏԵԱՆ-ԳԷՈՐԳԵԱՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՊԸՐՐԻԻ

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի՝ ընկերակցությունամբ երիտասարդության եւ մարմնակրթության նախարար Վարդիկ Օհանես-Գեորգեանի, երեկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի:



Հանդիպումն ետք նախարար Օհանես-Գեորգեան յայտնեց, որ խորհրդարանի նախագահին հետ քննարկած են լիբանանեան քաղաքական, տնտեսական եւ ընկերային կացության վերաբերող հարցեր՝ շեշտելով, որ ան Պըրրիի մօտ շօշափած Է Լիբանանի հանդէպ իր յանձնառուրինն ու լիբանանեան ազգային միասնականութիւնը ամրապնդելու ճիգերը, որպէսզի երկրին դիմագրաւած տագնապը միասնաբար կարելի ըլլայ յաղթահարել:

Նախարար Օհանես-Գեորգեան յայտնեց, որ ինք Պըրրիին ներկայացուցած է երիտասարդության եւ մարմնակրթության նախարարության մէջ սկսած

օրէնսդրական իր ընդարձակ աշխատանքը՝ ընդգծելով, որ Պըրրիի կողմէ այդ աշխատանքը որդեգրելու կարիքը կայ: Նախարար Օհանես-Գեորգեան նշեց նաեւ, որ Պըրրիին իրազեկ պահած է երիտասարդական քաղաքականության ծրագիրը գործադրելու ջանքերուն մասին: Ան անեցունց, որ խորհրդարանի նախագահը պատրաստակամութիւն յայտնած է ամբողջական զօրակցութիւն ցուցաբերելու տարուած աշխատանքին եւ խորհրդարանին մէջ արագացնելու երիտասարդության եւ մարմնակրթության նախարարության օրէնսդրական աշխատանքին համար պէտք եղած դասաւորումները:

ԱԼԻԵՒ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՀՈԼՈՎՈՅԹԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՏԵՍԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԱՆԻՍԱՍ ԸԼԼԱԼՈՒՆ ՄԱՍԻՆ

Ազրայէճանի նախագահ Իլիամ Ալիեւ ուշագրաւ յայտարարութիւններ կատարած է արցախեան տագնապին վերաբերեալ՝ յայտարարելով, որ տագնապի լուծման բանակցութիւններ փաստացիօրէն տեղի չեն ունենար, իսկ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներուն միջեւ տեղի ունեցող տեսաժողովները ոչ մէկ նշանակութիւն ունին:



Նշենք, որ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներ Չոհրապ Մաաքալանեանի եւ Էլմար Մամետտարովի միջեւ տեսաժողովը տեղի ունեցած էր 30 յունիսին:

«Սյսօր փաստացի բանակցային հոլովոյթ տեղի չ'ունենար: Ազրայէճանի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար-

ներուն միջեւ տեսաժողովները նշանակութիւն չունին: Ատիկա պարագայէ կը նշանակէ, որ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակը գործունեութիւն կը ծաւալէ: Լաւ, սակայն մինչեւ ե'րբ: Գործունեութիւն ծաւալել չի նշանակեր արդիւնաւետ ըլլալ», յայտարարած է Ալիեւ՝ ազգրպէճանական լրատուամիջոցներուն տուած հարցազրոյցին մէջ:

Ազրայէճանի նախագահը շեշտած է, որ ինք կ'ուզէ շօշափելի բանակցութիւններ վարել: «Այո', այս պարագային մենք կը մասնակցինք բանակցութիւններուն: Հակառակ պարագային բանակցութիւններու անհրաժեշտութիւն չկայ: Մենք Մինսքի խմբակէն ատիկա կը սպասենք եւ ամուր կանգնած ենք մեր դիրքին վրայ, արդարութիւնը մեր կողմն է», եզրափակած է Ալիեւ:

ԻՐԱՆԻ ՄԷՋ ՄԵԿ ՇԱՔԹՈՒՄԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ 4-ԲԴ ՊԱՅԹՈՒՄԸ

Իրանի մէջ արձանագրուած է վերջին շաբթուան ընթացքին 4-րդ պայթումը: Հօգօր պայթումը տեղի ունեցած է 7 յուլիսի լոյս գիշերը՝ մայրաքաղաք Թեհրանէն քանի մը քիլոմետր դէպի հարաւ: Այս մասին կը հաղորդէ «Ի.Էյ.Տէյի» կայքը: Իրանեան լրատուամիջոցները կը հաղորդեն, որ պայթումը տեղի ունեցած է Պաքերշահրի «Սեփահան Պորեշ» գործարանին մէջ: Պայթումին պատճառով իրդէն յառաջացած է, եւ անուազն երկու աշխատողներ մահացած են, իսկ երեք ուրիշներ՝ վիրաւորուած:



Գործարանն ու անոր մօտ գտնուող «Սապիա Փրես» կազմակերպութեան շէնքը լքօրէն վնասուած են: «Սապիա Փրես» կը զբաղի ինքնաշարժներու մասերու արտադրութեամբ:

Յիշեցնենք, որ 30 յունիսին Թեհրանի հիւսիսը գտնուող բժշկական դարմանատան մէջ տեղի ունեցած պայթումը պատ-

ճառ դարձած էր 19 մարդու մահուան: Երկու օր ետք, իշխանութիւնները յայտնած էին Սապահանի մարզին մէջ գտնուող Նաթանգի մէջ տեղակայուած իւրանիւմի հարստացման գործարանին մէջ տեղի ունեցած «արկած»-ի մասին, որուն պատճառով, ըստ պաշտօնական տուեալներու, մահեր չեն եղած:

Անկէ երկու օր ետք՝ 4 յուլիսին, հարաւաբնմտեան հուզեցտան նահանգի Ահուաք քաղաքին մէջ գտնուող ելէկտրակայանին մէջ պայթումի պատճառով հոսանքափոխարկիչ մը իրկիզուած էր:

ԹՈՒՐԵՒՅ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՋՆՁԷ ԻՐԱԸԸ ՄԱՍՆԱՏՈՒԾ ՆԵՐԱԿԱՅԱՑՆՈՂ ԲԱՐՏԵԱԸ

Թուրքիոյ նախագահութեան հաղորդակցութեան ծառայութիւնը «Թուիթթըր»-ի վրայ հրապարակեց իրաքը մասնատուած Ներկայացնող քարտէս մը՝ անոր կցելով հետեւեալ բացատրութիւնը. «Իրաքի մէջ ընդհանուր կացութիւնը մինչեւ 6 յուլիս 2020»: Այս մասին կը հաղորդէ «Մայաթիւն»-ը՝ անեցնելով, որ այդ գրառումէն քանի մը ժամ ետք, հաղորդակցութեան տնօրէնութիւնը զայն քնջած է:

Նախքան այդ, թուրք ընդդիմադիր երեսփոխան Էւ Ազգային անվտանգութեան քաղաքականության յանձնախումբի նախագահ Այթու Չըրայ զգուշացուց այդ քայլին վտանգաւորութենէն՝ մեկնելով շարք մը նկատառումներէ:

Ան «Թուիթթըր»-ի վրայ գրառում մը կատարելով յայտնեց, որ այդ քայլը այլ երկիրներու մէջ պաշտօնական կողմերուն իրաւունք պիտի տայ Թուրքիոյ վերաբերեալ նոյնպիսի քարտէսներ հրապարակելու, ինչպէս նաեւ կը հակասէ իրաքեան հողերու միութեան կառչած ըլլալու մասին Թուրքիոյ յայտարարուած կեցուածքին:

«ՄՊԻՏԱԿ ՏՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻՆ ՄԷՋ ԺԽՏՈՂԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ ՏԱՄԱՄԵԱԿՆԵՐ ԵՏՔ ԹԷԵՒ ՈՉ ԿԱՆԽԱՄՏԱԾՈՒԱԸ, ՄԱԿԱՅՆ ԱՐՏԱԲԵՐԵՅ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՋՐԸ» ԿԸ ԳՐԷ «ՈՒԱԾԻՆԿԱԾՆ ՓՈՍԹ»



Ամերիկեան հեղինակաւոր «Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթը անդրադարձած է Սպիտակ տան մամլոյ քարտուղար Քէյլի Մքենընի՝ 6 յուլիսին տուած մամլոյ ասուլիսի ընթացքին Հայոց ցեղասպանութիւնը եզրը հրապարակաւ օգտագործելուն: Մքենընի յայտնած էր, որ Միացեալ Նահանգներու մէջ վանտալիզմի զոհ դարձած է Հայոց ցեղասպանութեան յուշարձանը:

Օրաթերթը կը նկատէ, որ մամլոյ քարտուղարի շուրթերէն հնչած եզրը կարեւոր է այն առումով, որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը տասնամեակներ շարունակ կը մերժէր ճանշնալ 20-րդ դարու սկիզբը տեղի ունեցած դէպքերը:

«Թրամփի սերտ դաշնակից Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանը, ըստ երեւոյթին, ուրախ պիտի ըլլայ այդ առնչութեամբ», կը գրէ յօդուածագիր Աարոն Պլեյթը՝ ընդգծելով, որ Հայոց ցեղասպանութեան հարցին մէջ Միացեալ Նահանգներու կողմէ տասնամեակներ շարունակ վարուող ժխտողական քաղաքականութեան լոյսին տակ Սպիտակ տունը, թէեւ ոչ կանխամտածուած, սակայն արտաբերեց ցեղասպանութիւն եզրը:

Հեղինակը կը նկատէ, որ ամբողջ երկրի տարածքին յուշարձանները պղծող ցուցարարներու գործողութիւնները դատապարտելու ընթացքին Սպիտակ տան մամլոյ քարտուղարը Հայոց ցեղասպանութեան յուշարձանը կոչած է իր «ճշգրիտ անունով»:

«Կը թուի, թէ ըմբռնման եւ պատմական գիտելիքներու պակաս կայ, երբ Հայոց ցեղասպանութեան յուշարձանը, որ վառ կը պահէ մարդկութեան դէմ բոլոր յանցագործութիւններու, ներառեալ՝ ստրկութեան զոհերու յիշատակը, վանտալիզմի կ'ենթարկուի», կ'ըսէ Մքենընի՝ անդրադառնալով Քափիթիլոյ մօտ գտնուող եւ շաբաթներ առաջ Միացեալ Նահանգներու մէջ ծնող Ֆոյտի աղմկայարոյց սպանութենէն ետք ցեղային խտրականութեան դէմ սկսած զանգուածային ցոյցերու ընթացքին վանտալիզմի ենթարկուած Հայոց ցեղասպանութեան յուշարձանին:

Յօդուածին մէջ նաեւ կը նշուի, որ Սպիտակ տան

Շար.ը՝ Էջ 3

ՅՈՐԴԱՆԱՆ, ԵԳԻՊՏՈՍ, ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ. «ՊԻՏԻ ՉՃԱՆՉՆԱՐ 1967-Ի ՄԱՀՄԱՆՆԵՐՈՒ ՈՐԵԷՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԵՐՔ ԿՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԷՆ»




Բեզիպտոսի, Յորդանանի, Ֆրանսայի եւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարները յայտարարեցին, որ իրենց երկիրները պիտի ճանշնան «1967 թուականի սահմաններու որեւէ փոփոխութիւն, որուն շուրջ տագնապի կողմերը համաձայնութիւն չեն գոյացուցած»՝ անեցնելով. «Պաղեստինեան բռնագրաւեալ հողերու որեւէ կցում միջազգային օրէնքի խախտում պիտի ըլլայ»:

Չորս երկիրները այս կեցուածքը յայտնեցին Յորդանանի հրաւերով գումարուած տեսաժողովի մը ընթացքին, որուն Յորդանանի արտաքին գործոց նախարար Այման Սաֆատիի կողքին կը մասնակցէին Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Սամեհ Շուքրի, Ֆրանսայի արտաքին գործոց նախարար ժան-Իվ Լը Տրիան եւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Յայքո Մաա, ինչպէս նաեւ Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան յանձնակատարութեան ընդհանուր քարտուղարը:

Շար.ը՝ Էջ 3

ՄԱԿԱԾԷԼԵԱՆ. «ՀՅԳ-ԲՀԿ-ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՌԵԱԿԻՆ ՄԷՋ ԴԱԷՐ ՊԷՏՔ ԶԷ ՓՐՏՈՒԵԼ, ԱՄԷՆ ԻՆՉ ԵՂԱԾ Է ՇԱՏ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ»



ՀՀԴ-ն երկրին մէջ տիրող վիճակը կը գնահատէ աղետալի՝ ընդգծելով, որ քաղաքական ու կառավարման ճգնաժամը կրնայ յաղթահարուիլ միայն արտահերթ ընտրութիւններու միջոցով: Այս մասին 24TV-ի «Հարցազրոյց» հաղորդումի ընթացքին ըսած է ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեանը:

Սաղաթելեան կը կարծէ, որ իշխանութիւնները «Զորոնա» ժաիրի համաճարակին դէմ պայքարին մէջ անկարող են եւ միայն անոնք մեղաւոր են ստեղծուած վիճակին համար:

Անդրադառնալով «ՀՀԴ-ԲՀԿ-Հայրենիք» եռեակի ապագայ ծրագիրներուն՝ ան նշած է, որ «Զորոնա» ժաիրին պատճառով աշխատանքները դանդաղած են, բայց աշխատանքային խումբը յառաջիկայ ծրագիրներուն մասին շուտով յայտարարութիւններ պիտի կատարէ:

ՆԱԽԱՐԱՐ ՏՈՒՆՅԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՄՊԱՆԻՆ ՀԵՏ ԸՆՆԱՐԿԵՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՄԷՋ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ



7 յուլիսին Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տոնոյեան ընդունեց Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Լին Թրէյսին:

Հանդիպումին ընթացքին բնարկուեցան պաշտպանութեան բնագաւառին մէջ հայ-ամերիկեան երկկողմանի համագործակցութեան առնչուող հարցեր: Ամփոփուեցան նախապէս իրականացած ծրագիրները, ուսումնասիրուեցան համավարակով պայմանաւորուած սահմանափակումներու պայմաններուն մէջ համագործակցութեան ծրագիրներու իրականացման կարելիութիւնները:

Շար.ը՝ Էջ 4

«ԶՈՐՈՆԱ» ԺԱՅՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ ՄԵԿ ՍԻԼԻՈՆ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆ 9-ՐԴ ԴԻՐԵՆ ՎՐԱՅ Է



7 յուլիսի դրութեամբ Հայաստանի մէջ հաստատուած է «Զորոնա»-ով վարակուածներու ընդհանուր 29.285 պարագայ, որոնցմէ 16.907-ը՝ ապաքինած:

Այս մասին յայտնած է Հայաստանի առողջապահության նախարարութեան Հիւանդութիւններու վերաբերման եւ կանխարգիւման ազգային կեդրոնը:

Մէկ օրուան ընթացքին արձանագրուած է վարակման 349 նոր պարագայ, 605 ապաքինում: Զննութիւններու ընդհանուր թիւն է 125.088:

Ընդհանուր առմամբ «Զորոնա» ժաիրէն մահացածներուն թիւը հասած է 503-ի:

Շար.ը՝ Էջ 4

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՆԵՏՐԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՆՇԱՆԱԿԵՑ, ԽՍԿ ՊԵՖԱՆԻ ՀՐԱՄԱՐԱՎԱՆԻՐ
ՎԱՒԵՐԱՑՈՒՄԸ ՅԵՏԱԶԳԵՑ



Կառավարությունը երկ կեսօրե առաջ ժամը 11:00-ին նախագահական պալատին մեջ գումարեց իր ընթացիկ նիստը՝ նախագահութեամբ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուսի եւ ներկայութեամբ վարչապետ Զասսան Տիապի:

Նախքան նիստը գումարելը, նախագահ Աուսի եւ վարչապետ Տիապ դռնփակ եղողիպումի մը ընթացքին քննարկեցին երկրին իրադարձութիւններն ու կառավարութեան քննարկելիք օրակարգը:

Նիստին ընթացքին նախագահ Աուսի ընդգծեց Կեդրոնական դրամատան հաշիւները դատական հաշուեքննութեան ենթարկելու կարեւորութիւնը՝ նկատի ունենալով, որ անիկա Կեդրոնական դրամատան ելեմտական կացութիւնը իմանալու հիմնական ազդակներէն մէկն է, ինչպէս նաեւ անհրաժեշտ է Միջազգային դրամական ֆոնտին հետ կատարուող բանակցութիւններուն համար:

Իր կարգին, վարչապետ Տիապ շեշտեց, որ կառավարութիւնը կը շարունակէ իր աշխատանքները՝ աւելցնելով, որ Նախորդ փուլի աշխատանքները արդէն իսկ սկսած են արդիւնատուրիլ:

Ան նկատեց տուաւ, որ լիբանանցիները իրենց առօրեային մեջ աստիճանաբար պիտի գգան դրական տարբերութիւնները: Ան նշեց, որ սննդեղէնի օժանդակութեան փաթեթը պիտի յայտարարուի այսօր՝ աւելցնելով, որ այդ յայտարարութիւնը անկիւնադարձային պիտի ըլլայ՝ տղամէն հարցը լուծելու առումով:

Տիապ ընդգծեց, որ սննդեղէնի օժանդակութեան փաթեթը արագ արդիւնքներ պիտի արձանագրէ եւ անոր գործադրութիւնը բժախնդրուի պիտի հետապնդուի, որպէսզի անոր գործադրութիւնը չձախողի, եւ առեւտրականները զայն չայլանդակեն:

Շար.ը՝ էջ 3

ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ
ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ՀԱՍԱԻ
1907-Ի, ՄԱՀՈՒԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝
36-Ի, ԽՍԿ ԱՊԱՔԻՆԱԾՆԵՐՈՒՆԸ՝ 1348-Ի

ՀԱՐՈՒՆ. «ՅԱՌԱՋԻԿԱՅ ՕՐԵՐՈՒՆ
ՀԻՒՆԴԱՆՑՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԴՈՆԵՐԸ
ՊԵՏԻ ԲԱՆԱՆ ՄԻԱՅՆ ՇՏԱՊ ԿԱՐԻՔԻ
ՄԵՋ ԵՂՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆ»



Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երէկ Լիբանանի մեջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 1907-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 22 նոր վարակուածներ, որոնցմէ 14-ը տեղացիներ են, իսկ 8-ն՝ Լիբանան ժամանած արտերկրի լիբանանցիներ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Քորոնա» ժահրով վարակուած 36 պարագաներ մահացած են, իսկ 1348 ուրիշներ՝ ապաքինած:

Այս շրջագիծին մեջ առողջապահութեան նախարար Զամատ Զասան ընդունեց նախկին երեսփոխան Ամալ Ապու Էշխը, որ շուրիակալութիւն յայտնեց նախարարին՝ ժեզգիլին կառավարական հիւանդանոցայ այցելութեան առիթով, ինչպէս նաեւ քննարկեց յառաջիկայ աշնան Լիբանանը հարուածելիք «Քորոնա» ժահրի երկրորդ ալիքէն նախագգուշանալու միջոցները:

Միւս կողմէ, Լիբանանի սեփական հիւանդանոցներու սենտիքայի նախագահ Սէյման Զարուն երէկ հրափոխեց մամլոյ ասուլիսի մը, որուն ընթացքին շեշտեց, թէ յառաջիկայ օրերուն հիւանդանոցները իրենց դռները պիտի բանալ միայն շտապ կարիքի մէջ եղող պարագաներուն, այլ խօսքով՝ կենաց մահու հարցեր դիմագրաւող պարագաներուն, որովհետեւ հիւանդանոցները լուրջ տագնապի մէջ կը գտնուին՝ յատկապէս բժշկական եւ առողջապահական պիտոյքներու հարցով:

Ան ցաւ յայտնեց, որ Պէյրութի կառավարական հիւանդանոցին բաւարար մազուր չի տրամադրուի, որպէսզի ան իր բոլոր բաժանմունքները կարենայ բանեցնել՝ այլապիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ կառավարական հիւանդանոցները պէտք է զօրակցութիւն ստանան:

Զարուն շեշտեց, որ հիւանդանոցներուն տագնապը կարելի է լուծել պետական մակարդակով: «Այս մտահոգութեամբ մենք դիմեցինք պետութեան, սակայն անկէ դրական ոչ մէկ քայլ նշմարեցինք», ըսաւ ան:

ՄԵՅԻՏ ՆԱՍՐԱԼԼԱ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ
ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ
ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

Երէկ երեկոյեան ժամը 8:30-ին պատկերասփռուած ճառի մը ընդմէջէն Զըզալլայի ընդհանուր քարտուղար սէյիտ Զասան Նասրալլա նկատել տուաւ, որ ներկայիս լիբանանցիներուն դիմագրաւած ընկերային-տնտեսական եւ ապրուստի ծանր կացութիւնը կարիքը ունի բոլորին ճիգերուն:

Յուլիսեան պատերազմի յիշատակի նախօրեակին սէյիտ Նասրալլա վերոյիշեց դիմադրութեան յաղթանակները եւ շրջանին մեջ ամերիկեան ծրագիրի պարտութիւնը՝ մեկնելով Լիբանանէն:

Սէյիտ Նասրալլա ընդգծեց, որ հայեացքները դէպի Արեւելք ուղղելը չի նշանակեր յարաբերութիւնները խզել Արեւմուտքի հետ, եւ որեւէ պետութիւն, որ պատրաստակամութիւն կը յայտնէ Լիբանանին վարկեր տրամադրելու, երկրին մէջ ներդրումներ կատարելու կամ այլ միջոցներով օգտակար հանդիսանալու, Զըզալլան հարց չի կրնար ունենալ անոր հետ: Ան աւելցուց, որ այս մօտեցումը չի նշանակեր մեկուսանալ աշխարհէն, ներառեալ՝ Արեւմուտքը եւ Միացեալ Նահանգները, բացի սիոնական գոյացութենէն:

Սէյիտ Նասրալլա նկատել տուաւ, որ այսօր Լիբանանի վկայած անօթութեան եւ փութուրի սպառնալիքը որեւէ պետութեան դիմագրաւած ամենէն վտանգաւոր սպառնալիքն է: Ան շեշտեց, որ ամբողջական փութուրի եւ անօթութեան արգիւումը պէտք է վերածուի նպատակի եւ լոջօրէն քննարկուի անոր իրագործումը: Ան հաստատեց, որ լիբանանցիները յառաջիկային պէտք է գործուսին եւ աշխուժ ըլլան՝ յանգելու համար պահանջուած արդիւնքին: «Լիբանանցի ժողովուրդին կ'ըսեմ, որ մենք կրնանք սպառնալիքը առիթի վերածել եւ դուրս գալ սխալ քաղաքականութիւններու կուտակումէն», շեշտեց սէյիտ Նասրալլա՝ նշելով միաժամանակ, որ ընդ-



հանուր գործելակերպը պէտք չէ կաշկանդուած ըլլայ Միջազգային դրամական ֆոնտին հետ բանակցութիւններու արդիւնքներուն ժխտական սպասումով կամ շրջանային զարգացումներով՝ առանց որոնելու այլ ընտրանքներ:

Զըզալլայի ընդհանուր քարտուղարը նշեց, որ Զըզալլան կոչ կ'ուղղէ լիբանանցիներուն վերակենդանացնելու ճարտարարուեստի եւ երկրագործութեան մարգերը՝ իբրեւ հիմնական նախապայման արժանապատիւ գոյատեման՝ աւելցնելով, որ կուսակցութիւնը արդէն որոշած է երկրագործական եւ ճարտարարուեստի պատերազմը մղել ընդդէմ փութուրի եւ անօթութեան: «Մենք՝ Զըզալլայի մէջ, որոշեցինք դէմ դնել փութուրի եւ անօթութեան, եւ ամբողջ Զըզալլան, իր բոլոր կարելիութիւններով, կարողութիւններով, բարեկամութիւններով եւ դաշինքներով, պիտի գտնուի այս պատերազմի սիրտին մէջ», ընդգծեց սէյիտ Նասրալլա:

Սէյիտ Նասրալլա դիմադրութեան համախոհներուն ուղղելով իր խօսքը յայտարարեց. «Այսօր, ճարտարարուեստի եւ երկրագործութեան պատերազմին մէջ, ուր որ պէտք է գտնուիք, պիտի գտնուիք, եւ այս նոր մարտադաշտին մէջ մենք ներկայ պէտք է ըլլանք: Թող 7 յուլիս 2020-ը ըլլայ ճարտարարութեան եւ երկրագործութեան մարգերուն մէջ դիմադրութեան, **ժիւառի** եւ վերածնունդի յայտարարութեան թուական»:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

●ՎԱՐՉԱՊԵՏ Զասան Տիապ երէկ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ստացաւ երուրդական Միութեան արտաքին յարաբերութիւններու եւ քաղաքացիական ապահովութեան հարցերու գերագոյն յանձնակատար Ժոզէֆ Պորթլէն, որուն հետ քննարկեց Միջազգային դրամական ֆոնտին հետ Լիբանանի բանակցութիւններուն, ՖԻՆԻԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերու պաշտօնավարութեան երկարածգումին, ինչպէս նաեւ իր ջուրերուն մէջ գտնուող քնական հարստութեան Լիբանանի իրաւունքին վերաբերող հարցեր:

●ԻՍԼԱՄԱԿԱՆ գերագոյն խորհուրդը երէկ Նիստ մը գումարեց՝ նախագահութեամբ հանրապետութեան միւֆթի շէյխ Ապտէ Լաթիֆ Տըրիանի: Նիստին ընթացքին շեշտուեցաւ դատակալի իշխանութիւններուն անկախութիւնը պահպանելու կարեւորութիւնը: Իսլամական գերագոյն խորհուրդը շեշտեց, որ բոլորէն պահանջուած է զիջումներ կատարել: Նշենք, որ նախքան Նիստը, միւֆթի Տըրիան հանդիպում մը ունեցաւ նախկին վարչապետ Ֆուատ Սիլիորայի հետ:

●ԿԻՊՐՈՍ-Լիբանան բարեկամութեան խորհրդարանական յանձնախումբի նախագահ, երեսփոխան Ալի Պեզզի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Կիպրոսի դեսպանատան գործակալուր Էլիին Փափախիքլայը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները:

●ԸՆԴՅԱՆՈՒՐ ապահովութեան ընդհանուր տնօրէն հազարապետ-գորավար Ապաս Իպրահիմ հանդիպում մը ունեցաւ Զամաթի մէկ պատուիրակութեան հետ: Քննարկութեան պաղեստինեան զաղթականներուն մէջ տիրող ապահովական կացութեան, ինչպէս նաեւ լիբանանեան ապահովական մարմիններուն հետ փոխադարձ գործակցութեան վերաբերող մանրամասնութիւններ:

●ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԻ նախարար Իմատ Զուպալլա երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իրանի դեսպան Սոհմեդ ժալալ Ֆիրադկիւնի, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները, ինչպէս նաեւ երկկողմանի գործակցութիւնը ամրապնդելու հեռանկարները:

●ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ հանդիպում երեսփոխանական պլոքի անդամ Մարուն Զամատէ հաստատեց, որ մարտին համայնքի Պշարա Ռայի պատրիարքին յայտարարութիւնը ուղեգիծ մըն է եւ կոչ՝ վերջ տալու պատուութեան եւ միլիաներու երկակիւթեան:

●ՍՈՒՍԱԶԷՊԱԼ պլոքի երեսփոխան Ռուլա Թապիլ հաստատեց, որ վարչապետ Զասան Տիապ միայն աղերսել գիտէ՝ աւելցնելով, որ նախկին վարչապետ Սաատ Զարիրի այս իշխանութեան ներքեւ չի փա-

լաքիր վարչապետի պաշտօն ստանձնել:

●ԶԶՈՐ հանրապետութիւն պլոքի երեսփոխան Ժորժ Օքէյս յայտնեց, որ իրենց դէմ պիտի դնեն բոլոր անոնք, որոնք հանրապետութիւնը վտանգի կ'ենթարկեն:

●ԱՌՈՂՏԱՊԱՐԻՏԵԱՆ հարցերու խորհրդարանական միայուն յանձնախումբի նախագահ, երեսփոխան Ասեմ Արաժի յայտնեց, որ կառավարութիւնը պէտք է զօրակցի առողջապահական մարգին, որովհետեւ անոր փութումը կը նշանակէ լիբանանեան պետութեան քանդուումը:

●ԽՈՐՀՐԴԱԿԱՐԱԿԱՆ հանդիպում պլոքը երէկ գումարեց իր ընթացիկ նիստը, որին ընթացքին հարց տուաւ զաղտնիութեան պայմաններուն մէջ կատարուող նշանակումներուն մասին: Պլոքը ընդգծեց, որ կառավարութեան պաշտպանութիւնը կարելի է կատարել՝ աշխատանքի եւ արդիւնաբերութեան ընդմէջ:

●ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ հանդիպում երեսփոխանական պլոքը երէկ գումարեց իր ընթացիկ նիստը՝ նախագահութեամբ երեսփոխան Թայմուր Ժումալայի: Պլոքը հաստատեց, որ նկատի ունենալով ելեկտրոնականութեան մարգին նկատմամբ ցուցաբերուած մօտեցումն ու մտայնութիւնը, կարելի չէ բարեկարգում ապահովել:

●ԸՆԿԵՐՎԱՐ յառաջիկական կուսակցութեան ղեկավար Ռալիտ Ժումալաք Զլեմանտի իր քննարկանքին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Արիտանիոյ դեսպան Քրիս Ռամփիլսը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները: Անորադանալով նշանակումներուն՝ Ժումալաք յայտնեց, որ անոնք կը կատարուին ատակութեան եւ համայնքներուն հաշուոյն:

●ՆԱԽԿԻՆ փոխվարչապետ Զասան Զասպանի կոչ ուղղեց կառավարութեան վերջ տալու փտածութիւնը ծածկող ձեւական բարեկարգումներու մասին խօսելու եւ այդպիսով լիբանանցիները խաբելու արարքին:

●ՆԱԽԿԻՆ վարչապետ Թամմաժ Սալամ Պէյրութի նահանգապետ, դատախազ Մարուն Ապպուտի հետ քննարկեց մայրաքաղաքին կարիքները:

●ԶԸԶՊԱԼԼԱՅԻ ընդհանուր քարտուղարի տեղակալ շէյխ Նալիմ Զասեմ յայտնեց, որ Միացեալ Նահանգներ կը փափաքին վերջ տալ Դիմադրութեան, եւ այդ պատճառով ալ Ուաշինկթըն կը տնօրինէ լիբանանցիները անօթութեան ենթարկելու պայքար մը:

●ԺՈՂՈՎՐԴԱՅՈՒՐԱՅՈՒՐ օրաթերթը, իր տեղեկութիւնները քաղելով վարչապետ Զասան Տիապի մտքի աղբիւրներէն, կը գրէ, թէ կառավարութեան դէմ արշաւը կապուած է մէկ նպատակի, որն է կառավարութեան տալակալումը:

ԻՏԱԼԻՈՅ ՄԵՋ

«ԼԻՔԱՆԱՆ ԶԳԱՅՈՒՆ ՓՈՒԼ ՄԸ
ԿԸ ԴԻՍԱԳՐԱԿԷ, ԵՒ ՄԵՆՔ ՊԵՏԻ
ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԶՕՐԱԿՅԻԼ ԱՆՈՐ»

ՇԵՇՏԵՑ ԿՈՒՆԵՐԻՆԻ



Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Նասիֆ Զըթթի երէկ Զոմի մէջ շարունակեց իր հանդիպումները:

Այս շրջագիծին մէջ ան հանդիպում մը ունեցաւ պաշտպանութեան նախարար Լորենցօ Կուերիլիի հետ:

Հանդիպումին ընթացքին Զըթթի եւ Կուերիլի ընդգծեցին լիբանանեան եւ իտալական բանակներուն միջեւ գործակցութեան անհրաժեշտութիւնը՝ բարձր գնահատելով հարաւային Լիբանանի մէջ տեղակայուած ՖԻՆԻԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն եւ լիբանանեան բանակին միջեւ գործակցութիւնը՝ պաշտպանելու համար սահմանային կայունութիւնը:

Հանդիպումին մասին Իտալիոյ պաշտպանութեան նախարարութեան հաղորդագրութիւնը կը նշէ, թէ Կուերիլիի համաձայն, հարաւային Լիբանանի մէջ ՖԻՆԻԻԼ-ի խաղաղապահ ուժերու շրջագիծին մէջ աւելի քան 40 տարիէ ի վեր ծառայող իտալացի զինուորները ապահոված են սահմանային խաղաղութիւնն ու կայունութիւնը, որ Միջին Արեւելքի կայունութեան կը նպաստէ:

Կուերիլիի հաստատեց, որ իտալական զօրամասը պիտի շարունակէ իր աշխատանքը, պիտի օժանդակէ հարաւային բնակչութեան, ինչպէս նաեւ այս դժուար կացութեան ընթացքին պիտի օժանդակէ քաղաքապետարաններուն:

«Հարաւային Լիբանանի մէջ իտալական զօրամասին ունեցած յաջող փորձառութիւնը եւ արձանագրուած արդիւնքները, կը հաստատեն այդ զօրամասի առաքելութիւնը երկարաձգելու կարեւորութիւնը, առանց փոփոխութիւններու ենթարկելու անոնք իրաւասութիւնները:

«Լիբանան գգայուն փուլ մը կը դիմագրուէ, եւ մենք պիտի շարունակենք զօրակցիլ անոր», հաստատեց Կուերիլի՝ անդրադառնալով Լիբանանի դիմագրաւած տնտեսական ծանր տագնապին:

ՎԱՏԻԿԱՆԻ ՄԵՋ

Վատիկանի մէջ Զըթթի հանդիպում մը ունեցաւ արտաքին գործոց նախարար, եպիսկոպոսապետ կարտինալ Փոլ Ռիչլըրտ Կալակըրի հետ:

Կալակըր ընդգծեց Լիբանանին նեցուկ կանգնելու եւ անոր դիմագրաւած տնտեսական, ելեմտական եւ ընկերային տագնապը թօքափելու իմաստով անոր օժանդակելու կարեւորութիւնը:

Շար.ը՝ էջ 3

ՈԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԸ ՊՈՒՍԱՐԻԻ ՀԵՏ
ՔՆՆԱՐԿԵՑ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ
ԻՐԱԴԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Մարտին համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երէկ Տիմանի մէջ ընդունեց Լիբանանի մէջ Սեուտական Արաբիոյ դեսպան Ռալիտ Պուխարի, որուն հետ քննարկեց լիբանանեան-սեուտական երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ մարտի պատրիարքութեան եւ Սեուտական Արաբիոյ միջեւ պատմական յարաբերութիւնները:

Պուխարի դուռատեց Ռայի պատրիարքին կիրակի օրուան քարոզը՝ գնահատելով անոր յայտարարութիւնը:

«Ռայի պատրիարքը իր կոչին մէջ ուղղեց հարցերը, յատկապէս Լիբանանի չեզոք կեցուածքին, ինչպէս նաեւ շրջանային տագնապներին ինքզինք գերծ կացուցելու մօտեցումին կառչածութեան ակնարկելով», ըսաւ Պուխարի:

Ան նշեց նաեւ, որ ինք համաձայն է Ռայիի այն տեսակետին, որ Լիբանանի նկատմամբ արաբական եւ միջազգային ընտանիքներուն վստահութիւնը պէտք է ամրապնդուի:

«Սեուտական Արաբիա կազմ ու պատրաստ է զօրակցելու Լիբանանին», ըսաւ Պուխարի՝ աւելցնելով, որ Ապպալա թագաւորին կեդրոնը ընկերային եւ մարդասիրական հսկայական օժանդակութիւն կը կատարէ՝ մեղմացնելու համար տնտեսական տագնապին հետեանքներն ու լիբանանցի քաղաքացիներուն ուսերը ծանրացնող բեռը:

Ռայի պատրիարքին այցելեց նաեւ Զօր հանրապետութիւն երեսփոխանական պլոքի մէկ պատուիրակութիւնը, որուն հետ հանդիպումին քննարկուեցան լիբանանեան իրադարձութիւններն ու երկրորդ քաղաքական եւ տնտեսական տագնապներու փրկելու անհրաժեշտութիւնը:

ԱՆԴՐԵՐԻՄԵԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Գ. ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

«Մենք բոլորի՝ անձեռնմխելիությունը հանելու կողմ-նակից ենք, ո՛չ միայն ընդդիմության, հասկանալով, որ դա ի վերջոյ ընդդիմադիրի վերջին պաշտպանու-թիւնն է, այ իմա դուք եկել էք ապացուցելու, որ եղ պաշտպանությունը գոյություն չունի, ձեռական բնոյթ ունի, երբ կ'ուզեք՝ կը հանեք: Եղ պատճառով մենք ասում ենք՝ եկե՛ք սահմանադրութեամբ հանենք բոլո-րից. մեծամասնութեան մեղմ ամբաստանութեամբ նրան ասացիք. Յա դու է՛դ տղէն էիր. ինչի՞՝ գնացի սկսեցիր իշխանություններին քննադատել. ուզում էք եղ ձեռով բացատրել իսկական պատճառը»:

ՉԷ՛. չէ՛. ո՛չ Գագիկ Ծառուկեանի անձեռնմխելիու-թեան, ո՛չ ալ Ազգային ժողովին մէջ փաշինեանական մեծամասնութեան ուղղուած է խօսքը: Այս խօսքերը ՅՅ Դաշնակցութեան անունով արտասանեց հանգուց-եալ ընկեր Վահան Յովհաննիսեանը՝ գանոնք ուղղելով օրուա՛ն խորհրդարանական մեծամասնութեան՝ Յան-րապետականներո՛ւն: Եւ այսօր մարդիկ կ'ըսեն, որ դաշնակները անոնց լծակիցներն են: Բայց ասիկա ու-րիշ նիւթ է: Վերադառնա՛նք անձեռնմխելիութեան հարցին:

Յիշեցնեմ. երկար տարիներ նախկին վարչախաւի վստահելի արտաքին գործոց նախարարը ըլլալէ ետք, Վարդան Օսկանեան Ազգային ժողովի պատգամաւոր ընտրուեցաւ. եւ օր մըն ալ սխալեցաւ ու քննադատեց օրուան իշխանություններու քաղաքականությունը:

Շատ արագ թղթածորարներ մշտնջէ ելան, եւ Ազգա-յին ժողովը գումարեց յատուկ նիստ՝ վերցնելու համար անոր անձեռնմխելիությունը:

ՅՅ Դաշնակցութեան անունով օրին պատգամաւոր Վահան Յովհաննիսեան 1 հոկտեմբեր 2012-ի նիստին այս կեցուածքը փոխանցեց հանրապետական մեծա-մասնութեան, որուն գործակիցը ըլլալու ամբաստա-նությունը կ'ուղղուի այսօր:

Այսօր հանրապետականները չկան, եւ Ազգային ժո-ղովի մեծամասնությունը գանոնք տապալած փաշին-եանականներն են: Տարբերությունը այսքան է:

2012-էն այսօր միայն անունները փոխուած են: Գործելածելը նոյնն է. Կասկածելի խորհրդարանակա-նի թղթածորարին վրայ տարիով կը պառնինք, բայց եթէ օր մը յանգնի դէմ էլէլ իշխանութեան, թղթածորարը կը բացուի:

18 տարիներ ետք միայն անունները փոխուած են, բայց ոճն ու ընթացքը նոյնն են:

Յետեւաբար, Դաշնակցութեան յորդորն ալ նոյնն է. մեր վաղաժեռիկ ընկերը ըսաւ հանրապետականնե-րուն. նոյն իրադրին պէտք ունին նոյն ընթացքը որդեգ-րած այսօրուան իշխանաւորները:

Եթէ անձեռնմխելիությունը ընդդիմադիր փոքրա-մասնութեան պաշտպանությունն է, որպէսզի ազատօ-րէն քննադատէ իշխանությունը, բայց միեւնոյն ատեն այն անձեռնմխելիությունը իշխող մեծամասնութեան ձեռքն է, ցանկացած պահու կը վերցնէ:

Ուրեմն, եղէ՛ք ազնիւ. վե՛րջ տուէ՛ք այս «Ֆարս»-ին, խաբկանքի՛ն:

Սահմանադրութեամբ վերցուցէ՛ք անձեռնմխելիու-թիւնը բոլորէ՛ն:

Դ. ԿԻՐՔԻ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Դա առաջացում է նորից ատելություն, նորից անջրպետ, եւ մեր հասարակութեան մէջ այդ անջրպե-տը նոյնիսկ աւելի վատ է, քան առաջ, այսինքն՝ փոխա-դարձ անվստահութեան հարցը Էնքան է խորացել, որ ոչ ոք չի հաւատում նոյնիսկ անկեղծ հրաւերին՝ թէ եկէ՛ք համագործակցենք (...) Զանի եւ աղետալի վիճա-կից կարող ենք դուրս գալ միայն միասին աշխատե-լով»:

Այս խրատը, այս զգուշացումը ՅՅ Դաշնակցու-թիւնը ուղղեց Յանրապետական կուսակցութեան, նա-խագահին կառավարութեան եւ խորհրդարանական մեծամասնութեան: Այս զգուշացումը արտասանեց հանգուցեալ ընկեր Վահան Յովհաննիսեան, Ազգային ժողովի 22 մայիս 2013-ի նիստին:

Դաշնակցությունը կը հակազդէր իշխանություննե-րու շղթայազերծած քաղաքական արշաւին, որ կիրք, ատելություն եւ արհամարհանք կը սերմանէր ընդդի-մութեան դէմ, ներառեալ՝ պրն. Փաշինեանը:

Այսօր, աւելի քան երկու տարիէ ի վեր, նոյն Նիկոլ Փաշինեանը, արդէն իշխող ու մեծամասնութիւն, ան-ձամբ, պետական ու քաղաքական գործիչներու եւ լրատուական ու ընկերային ցանցերու միջոցով անընդհատ կիրք, ատելություն, անհանդուրժողություն կը բորբոքեն իրենց ընդդիմադիրներուն ու քննադատ-ներուն դէմ:

Կարողացէ՛ք կամ դիտեցէ՛ք այդ ելոյթները. այն տպաւորությունը պիտի ստանաք, որ խօսքը չի վերա-բերիր նոյն ժողովուրդին, նոյն պատմութիւնը, երկիրն ու ճակատագիրը բաժնող ազգի գաւակներու, այլ եր-կու դարաւոր ոսոխներու, որոնց միջեւ վրժիժ եւ ատե-լութեան կրակը կը մարի միայն մեկուն կամ միւսին ոչնչացումով:

Եթէ ոչ ընդունելի, բայց հասկնալի է, որ ընտրու-թիւններու ատեն կարգ մը քաղաքական գործիչներ դիմեն «մենք եւ անոնք»-ի յստակ բեռեւացման, ընտ-րապայքարի ատեն կըրտ, նոյնիսկ մաղձոտ յայտա-րարություններու: Բայց ներելի չէ շարունակել նոյն ըն-թացքը, երբ դառնաւ իշխանություն, եւ պարտաւոր ես հայրական հոգածութեամբ ծառայել ամբողջ երկրիդ եւ ազգիդ բոլոր գաւակներուն անխորի:

7 տարի առաջ, Դաշնակցութեան անունով մեր ննջեցեալ ընկերը այդ խրատը ուղղեց հանրապետա-կան մեծամասնութեան, ի պաշտպանություն ձեզ նման ընդդիմադիրներու, պրն. Փաշինեան:

Այսօր դուք կը գործեք նոյն սխալը, յանցանքը, եւ կը մեղանչեք, միաժամանակ դաշնակները ամբաստանե-լով իրեն հանրապետականներու ուղեկից:

Յարկ չկայ այցելելու ընկեր Վահան Յովհաննիսեա-նի շիրիմը. համացանցի վրայ դիտեցէ ՅՅ Դաշնակ-ցութեան խօսմանի այդ ելոյթը:

Յանրապետականին ըսինք եւ Փաշինեանին կ'ըսենք նոյնը. հայերուն միջեւ անջրպետը մի՛ խորացը-նէք, որովհետեւ երկիրն ու ժողովուրդը կարելի է փրկել միա՛ն միասին:

ՀԱՅԿԱՉՈՐՆ

ԱՆԴՐԱԴԱՐԱԶ

ԶԳՈՒՇԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՎՃՈՍԿԱՆՈՒԹԻՒՆ

Ժողովրդավարական վարչակարգի տեր պետութեան մը մէջ գոյութիւն ունին մտածողութեան եւ մանաւանդ գործունէութեան անշրջանցելի արժեհամակարգ ու մշակոյթ, որոնք կը բացառեն կամայականությունը: Այդ արժեհամակարգէն ու մշա-կոյթէն որեւէ շեղում, կամայական որեւէ քայլ առնել կը նշանակէ մուտք գործել Լու-թովկոս ԺԴ.-ի «Ես եմ պետությունը» մտածելակերպի աշխարհ: Դժբախտաբար Յա-յաստանի Յանրապետութեան մէջ ճիշդ այդ տեղի ունեցաւ, երբ Ազգային ժողովը, աւելի ճիշդ երկրի վարչապետին ղեկավարած «Իմ Զայլը» պատգամաւորական խմբակցությունը Սահմանադրական դատարանի անբաղձալի անդամներէն ձերբա-զատելու իր ղեկավարին անձնական փափաքն ու կամքը կատարեց:

Զանի մը ժամուան մէջ հապճեպ կերպով որդեգրուած այդ օրէնքը հարազատ արտացոլումն է Սահմանադրական դատարանի դատաւորներէն անոնց պաշտօնա-վարութեան աւարտէն առաջ ձերբազատելու վարչապետ Փաշինեանի անհամբերու-թեան ու աճապարանքին: Ներկայութիւն մը, որ պետական առողջ մտածողութիւնը կը թելադրէր հանդուրժել, որքան ալ «անախորժ» ըլլար այդ:

Յայաստանի Յանրապետութեան նախագահը մերժեց ստորագրել 22 յունիսին խորհրդարանին կողմէ որդեգրուած այդ օրէնքը՝ այդպիսով վկայելով եւ ընդունելով լուրջ խնդիրի մը գոյութիւնը: Ահա թէ ինչու «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանի «ինչո՛ւ նախագահը որոշեց չստորագրել օրէնքները, արդեօք վիճայարո՞յց կը նկա-ւէ գործընթացը, թէ՞ այլ պատճառ կայ» հարցումին ի պատասխան նախագահի աշ-խատակագմէն յայտնեցին, թէ այդ առնչութեամբ լրացուցիչ մեկնաբանություններ չունին: Նախագահը իր կիսաքայլով արդէն պատասխանած էր այդ հարցումին:

Ըստ սահմանադրութեան 83-րդ յօդուածի 4-րդ մասին, նախագահը պարտի օրէնքը ստանալէ 21 օր ետք կա՛մ զայն ստորագրելով հրապարակել, կա՛մ ալ նոյն ժամկետին դիմել Սահմանադրական դատարան՝ որդեգրուած օրէնքի սահմանադ-րութեան համապատասխանությունը որոշելու համար: Այլ խօսքով՝ նախագահ Ար-մէն Սարգսեան կանգ առաւ իր սահմանադրական այդ պարտաւորութեան կատար-ման կէտ ճամբուն վրայ: Զգուշաւորություն մը եւ անվճռականություն մը, որ կարելի է վերանշել երկրին մէջ տեսեծուած անհանդուրժողականութեան մթնոլորտին մէջ «հակայեղափոխական» պիտակէն ու բանադրանքէն խուսափելու փորձի մը:

ՎԱՅԲԱՆ ԵՍՄԻԵԱՆ

«ՄԻԻՏԱԿ ՏՈՒՐԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԻՆ ՄԷԶ...»

Շարունակուած Ա. Էջէն

մամլոյ քարտուղարի խօսքերը «անախորժ իրավիճակ ստեղծեցին ներկայ վարչա-կազմին համար, որ, ինչպէս իր նախորդ-ները, ակնյայտօրէն կը խուսափի ցեղաս-պանություն եզրի կիրարկումէն»:

Յեղիակը կը իշխեցնէ, որ Միացեալ Նա-հանգներ երկար տարիներէ ի վեր կը մեր-ժեն ճանչնալ Յայոց ցեղասպանությունը՝ Միջին Արեւելքի մէջ Թուրքիոյ հետ իրենց ռազմավարական դաշինքին պատճառով:

Մշբբերելով հանրապետական ձերա-կուտական Լինտսի Կրեքեմի խօսքերը, թէ «Ցեղասպանութեան ճանաչումը քաղա-քական առումով իսկապէս վտանգաւոր է»՝ յօդուածագիրը կը նշէ. «Սպիտակ տու-նը, վստահաբար, պիտի անդէմ, որ Մշբնքի պարզապէս յուշարձանը կոչած է իր անու-նով», սակայն այս դէպքը, միեւնոյնն է, իրադարձային տր, որովհետեւ երկար տա-րիներ Սպիտակ տան պաշտօնական շուր-թերէն այդ եզրի կիրարկումը արգիւտած եղած է:

Նշենք, որ Ամերիկայի Յայ դատի կեդրո-նական գրասենեակի գործադիր վարիչ Արամ Յամբարեան՝ անդրադառնալով

Մշբնքիի՝ Յայոց ցեղասպանութեան կա-տարած ակնարկութեան, ըսաւ. «Յաւանա-կան է, որ այս իւրայատուկ հաստատումին ընդմէջէն ականատես կ'ըլլանք Ամերիկայի ամբողջ կառավարութեան կողմէ Յայոց ցեղասպանութեան ճանաչման առաջին քայլերուն: Ասիկա յստակօրէն հետեւանքն է՝ անցեալ տարի Ներկայացուցիչներու տան թիւ 296 եւ Ծերակոյտի թիւ 150 բա-նաձեւերուն գրեթէ միաձայնութեամբ որ-դեգրման»:

Յամբարեան նաեւ աւելցուց, որ անց-եալ տարուան պատմական զոյգ բանաձե-ւերուն որդեգրումով կարելի եղաւ առաւել եւս ամրապնդել Դեմոկրատական եւ Յան-րապետական կուսակցություններուն հա-մախոհական գետինը Քոնկրեսին եւ Ծե-րակոյտին մէջ, ինչպէս նաեւ Միացեալ Նա-հանգներու 50 Նահանգներէ 49-ին մէջ:

«Ասիկա ցոյց կու տայ, որ Թուրքիան արժանի չէ եւ ամերիկեան քաղաքականու-թեան մէջ Յայոց ցեղասպանութեան վերա-բերեալ չի կրնար ունենալ վերջոյի որեւէ իրաւունք», եզրափակեց Յամբարեան:

ՉՈՐԴԱՆԱՆ, ԵԳԻՊՏՈՍ, ՅՐԱՆՍԱ ԵՒ...

Շարունակուած Ա. Էջէն

Յորդանանեան լրատուամիջոցներ հաղորդեցին, որ ժողովի ընթացքին քննարկուած են «Պաղեստինեան դատի զարգացումները եւ խաղաղութեան հոլո-վոյթի ներկայ կացությունը»։ Ժողովին մասնակիցները շեշտած են, թէ Իսրայելի կողմէ Այսրորդանանէն ու Յորդանան գե-տի հովիտէն բաժիններ կցելու քայլը «շրջանի անվտանգութեան ու կայունու-թեան համար վտանգաւոր հետեւանքներ պիտի ունենայ»։

Եգիպտոս, Յորդանան, Ֆրանսա եւ Գերմանիա ընդգծեցին իրենց յանձնա-ռությունը՝ «միջազգային օրէնքի վրայ հիմնուած բանակցություններու ճամբով

երկու պետություններու լուծման» նկատ-մամբ։

Միւս կողմէ, իսրայելեան լրատուամի-ջոցներ հաղորդեցին, որ Իսրայելի վար-չապետ Պենիյամին Նեթանիախու վերա-տանկոյ վարչապետ Պորիս Ծոնսընի հետ ժողովի ընթացքին յայտնած է, որ Իսրայել պատրաստ է Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի խաղաղու-թեան ծրագիրին հիմամբ բանակցություն-ներու։

Ան նախագահ Թրամփի «Դարու գոր-ծարք»-ը անունով ծանօթ ծրագիրը նկա-տած է «նորարար եւ իրատեսական, եւ չի կրկներ անցեալի ձախող բանաձեւերը»։

«ԼԻԲԱՆԱՆ ԶԳԱՅՈՒՆ ՓՈՒԼ ՄԸ...»

Շարունակուած 2-րդ էջէն



Կալակըր նշեց, որ Լիբանան պետք է շարունակէ Միացեալ Նահանգներու, Միջազգային դրամական ֆոնտին եւ միջազգային ընտանիքին հետ իր սկսած երկխօսությունը՝ երկրին դիմագրաւած տնտեսական-եւելմտական տագնապին լուծում մը գտնելու նպատա-կով։

Իր կարգին, Ջըթթի ներկայացուց Լիբանանի ներկայ իրավիճակը եւ անոր դիմագրաւած հարցերը, յատկա-պէս կրթական մարզին դէմ ծառացող մարտահրաւերնե-րը։

Այս իմաստով Կալակըր խոստացաւ օժանդակել Լի-բանանին եւ անոր միջազգային գործընկերներուն հետ լուծումներու յանգի։

Յանդիպումին ընթացքին քննարկուեցան նաեւ շրջա-նային իրադարձությունները՝ յատկապէս Իրաքի եւ Սու-րիոյ վերաբերող։

Ջըթթի այցելեց նաեւ Արեւելքի եկեղեցիներու հա-մախմբումի նախագահ կարտինալ Լեոնարտօ Սանտրիի, որուն հետ քննարկեց Լիբանանի դիմագրա-ւած մարտահրաւերները, ինչպէս նաեւ անոր կատար-ւելիք օժանդակությունները՝ շրջանցելու համար այս խո-ցելի փուլը։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած 2-րդ էջէն

Վարչապետ Տիապ շնորհակալութիւն յայտնեց Իրաքի վարչապետ Մուսթաֆա Զազիմիին՝ Լիբանանի հանդէպ ցուցաբերած անոր զօրակցութեան համար։

«Մեր գրաւը լիբանանցիին կամքին գորութեան վրայ է, ինչպէս նաեւ արաբական երկիրներուն օժանդակու-թեան, որովհետեւ Լիբանանին եղբայր արաբական եր-կիրներ մերժեցին լքել Լիբանանը», ըսաւ ան։

Վարչապետ Տիապ հաստատեց, որ արաբական կարգ մը երկիրներ խոստացած են նեցուկ կանգնիլ Լիբանա-նին եւ օժանդակել անոր՝ տնտեսական տագնապէն դուրս գալու նպատակով։

Նիստէն ետք տեղեկատուութեան նախարար Մանալ Ապտել Սամատ յայտնեց, որ կառավարութիւնը յետաձը-գեց դատական հաշուեքնություն կատարող ընկերու-թեան հետ պայմանագիրները ստորագրելու հոլովոյթը։

Ապտել Սամատ յայտնեց նաեւ, որ կառավարութիւնը նշանակած է Ելեկտրականութեան ընկերութեան տնօ-րէն խորհուրդը, որուն մաս կը կազմեն Թարեք Ապտալ-լա, Յիւսէյն Սալլում, Սամեր Սելիմ, Զարիմ Սապա, Յա-պիպ Սորու եւ Շառի Բոյաթի։

Ապտել Սամատ յայտնեց, որ կառավարութիւնը որո-շեց ջնջել 2020-ի պրեզլէի եւ պաքալորեայի պետական քննությունները՝ «պրեզլէի քննութեան պարագային պա-հելով վերաքննութեան յատուկ առիթ մը», ըսաւ ան։

Ապտել Սամատ նշեց, որ կառավարութիւնը որոշեց յե-տաձգել Ելեմուտքի նախարար Ալէն Պիֆանիի հրաժա-րականի վաւերացումը։

Ան նշեց, որ դատական իշխանութեան մարզին մէջ երեք քննիչներու նշանակման օրակարգը եւս յետաձգ-ւած է։

Իր կարգին, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Ռեմոն Ղաժար յայտնեց, որ Նաւթ փոխադրող Նաւը ար-դէն իսկ հասած է Լիբանան, եւ վաղուքէն սկսեալ կարելի պիտի ըլլայ քաղաքացիներուն ելեկտրական յաւելեալ հոսանք հայթայթել։

Ելեկտրականութեան ընկերութեան ընդհանուր տնօ-րէնի պաշտօնին մասին հարցումի մը պատասխանելով՝ Ղաժար շեշտեց, որ Զամալ Յայեք կը շարունակէ այդ պաշտօնին վրայ մնալ, մինչեւ նոր ընդհանուր տնօրէնի մը նշանակումը։

Նշենք, որ վարչապետ Տիապ, երկրագործութեան նա-խարար Ապպա Մորթաաա, տնտեսութեան նախարար Ռաուլ Նամմէ, ճարտարապետտի նախարար Իմատ Յուպալլա եւ Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ երկէ երկոյեան վարչապետարանէն յա-տարարեցին սննդեղին օժանդակութեան փաթեթը։

ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Այն միություններն ու այն անհատները, որոնք կ'ուզեն դա-սախօսական ձեռ-նարկներու եւ ընդու-նելություններու հա-մար «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահը օգ-տագործել, կրնան հեռաձայնել «Ազ-դակ»-ի խմբագրա-տուն, հեռ. 258526-260115-241274, եր-կուշաբթին ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5:30-էն մինչեւ ժամը 7:30:

Առգանց Լսարան



Չորեքշաբթի, 8 Յուլիս 2020-ին, երեկոյեան Պէյրուքի ժամանակացոյցով ժամը 18:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com ե նամակին կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)


Հայոց ՅԵՂԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶԱՆ ԴԷՄ Անգարայի ՄԱՍԸ ՊԱՅԵՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԴՐԱԵՒՈՐՈՒՄՆԵՐՈ

Զեկուցող՝ փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեան

ՀՀ Գիտություններու Ազգային Ակադեմիայի Արևելագիտության հիմն

ՈՌՈՍԻՈՅ ՈՐԴՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԷՆ ԱՒԵԼԻ ՔԱՆ 300 ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ ԹՈՒՐԲԻՈՅ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵՆ՝ Ս. ՍՈՖԻԱՆ ՄՋԿԻԹԻ ՉՎԵՐԱԾԵԼՈՒ



«Կրիք Սիթի Թայմզ» կայքը կը հաղորդէ, որ աշխարհի աւելի քան երեք հարիւր գիտնականներ իրենց մտահոգութիւնը յայտնած են Թուրքիոյ Ս. Սոֆիա տաճարի կարգավիճակը՝ թանգարանէն մզկիթի վերածելու մտադրութեան նկատմամբ:

Բիզանդական եւ օսմանեան արուեստի եւ մշակոյթի գիտնականները իրենց բաց նամակին մէջ յայտնած են, որ չեն գրեր ի նշան բողոքի այն գործողութիւններուն դէմ, որոնք տակաւին չեն իրականացուած, այլ պարզապէս, որպէսզի «բացատրենք այն մտավախութիւնը, որ մենք կը կիսենք» հիմնուելով մեզի ներկայիս հասանելի տեղեկատուութեան վրայ»:

Նամակին մէջ մասնաւորաբար կը նշուի, որ ըստ գիտնականներուն, հիմնական հարցը այն չէ, թէ արդեօք Այա Սոֆիան պէ՞տք է թանգարան ըլլայ, թէ՛ մզկիթ, այլ այն, թէ ինչպէ՞ս պէտք է լաւագոյնս հոգ տանիլ Այա Սոֆիային:

Ռուսիոյ ուղղափառ եկեղեցւոյ Զիրիլ պատրիարքը «խոր մտահոգութիւն» յայտնեց Ս. Սոֆիան մզկիթի վերածելու թրջական մտադրութեան նկատմամբ եւ Ս. Սոֆիան նկատեց «քրիստոնէական ժառանգութեան մեծագոյն յուշակոթողներէն մէկը»:

Ան հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնեց. «Ս. Սոֆիային նկատմամբ որեւէ սպառնալիք սպառնալիք է ամբողջ քրիստոնէական քաղաքակրթութեան, ուստի եւ մեր հոգեւոր ու պատմական արժէքներուն դէմ»:

«Ս. Սոֆիան իւրաքանչիւր ուղղափառ ռուսի համար մինչեւ այսօր քրիստոնէական մեծ ուխտատեղի է», ըսաւ ան՝ թրջական իշխանութիւններուն կոչ ուղղելով զգուշանալու, որովհետեւ պատմական կառոյցին ներկայ կարգավիճակին որեւէ փոփոխութիւն ռուս ժողովուրդին «մեծ ցաւ» պիտի պատճառէ:

Ռուսիոյ Նախագահի բանքեր Տմիրի Փեքով իր կարգին յայտնեց, որ պատմական վայրին ապագայ կարգավիճակի հարցը թրջական ներքին հարց մըն է: Ան նոյն ատեն յոյս յայտնեց, որ նկատի կ'առնուի Ս. Սոֆիայի իբրեւ միջազգային ժառանգութեան վայր կարգավիճակ՝ աւելցնելով, որ տաճարը իւրայայտուկ էր եւ ռուսներուն համար շատ կարեւոր «հոգեւոր սուրբ արժէք» մը ունի:

«Անշուշտ, կը յուսանք, որ մեր թուրք պաշտօնակիցներն ու ընկերները այդ բոլորը նկատի կ'ունենան», աւելցուց Փեքովը:

ՆԱԽԱՐԱՐ ՏՈՒՆՅԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ...

Շարունակուած Ա. Էջէն

Արծարծուեցաւ Նաեւ միջազգային խաղաղութեան եւ կայունութեան պահպանման առաքելութիւններուն Յայաստանի շարունակական մասնակցութեան պարագան, արտակարգ իրավիճակի մէջ հերթափոխներու իրականացման ընթացքը:

Պաշտպանութեան Նախարարը ներկայացուց բանակին մէջ «Զորոնա»-ի դէմ պայքարի եւ տարածման կանխարգիման միջոցառումները, ինչպէս Նաեւ համավարակի պայմաններուն մէջ ամառնային զօրակոչի կազմակերպման ընթացքը:

Դեսպանը նշեց, որ ուրախ է հանդիպում ունենալու պաշտպանութեան Նախարար Դավիթ Տօնոյեանի հետ եւ քննարկելու Յայաստանի եւ Միացեալ Նահանգներու փոխադարձ շահերուն ու մտահոգութիւններուն առնչուող հարցեր:

Հանդիպումի ընթացքին զրուցակիցները միտքեր փոխանակեցին Նաեւ շրջանային անվտանգութեան եւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող այլ հարցերու շուրջ:

ԱՖՀԻԼ
Since 1998
AFHIL
ARMENIAN MUTUAL FUND

20 Years of Commitment

"The BEST way to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others"

Mahatma Gandhi

Health Insurance
 Travel Insurance
 GoodCare Clinic
 Car Insurance
 Health Clubs

Home Medical Equipment
 BOB - Western Union
 University and Student Fund
 «ՅԱՐԵՍ» Health Magazine

www.afhil.com | AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | Tel. 01 242 556/7

«ԻՆՉՈ՞Ւ ԹՈՒՐՔԻԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՄԱՍՆԱԿՑԻԼ «ԷՖ-35»-Ի ԱՐՏԱԳՐՈՒԹԵԱՆ»

ՓԵՆԹԱԿՈՆԻՆ ԿԸ ՀԱՐՑՆԵՆ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆՆԵՐԸ

Միացեալ Նահանգներու հանրապետական ծերակուտականներ ճեյմս Լենքֆորտ եւ Թոմ Թիլիս, ինչպէս Նաեւ Միացեալ Նահանգներու դեմոկրատական ծերակուտականներ Ճին Շահին եւ Զրիս Վան Հոլլեն Նամակ յղած են Միացեալ Նահանգներու պաշտպանութեան Նախարար Մարք Եսփըրին՝ պահանջելով բացատրութիւն տալ, թէ ինչո՞ւ Թուրքիան, հակառակ Ուաշինկթընի՝ զինք ամերիկեան «ԷՖ-35» կործանիչներու արտադրութեան ծրագիրէն բացառելու որոշումին, կը շարունակէ ատոր մասնակցիլ: Համապատասխան Նամակը հրապարակուած է երկուշաբթի օր՝ Լենքֆորտի կայքին վրայ:

«Թուրք արտադրողները տակաւին կ'արտադրեն եւ կը մատակարարեն հիմնական տարրերը՝ հակառակ այդպիսի մասնակցութեան օրէնսդրական արգելքին», կը նշուի ծերակուտականներու յայտարարութեան մէջ:

Անոնք կոչ ուղղած են բացատրելու այն պատճառները, թէ ինչո՞ւ Թուրքիան կը շարունակէ մասնակցիլ արտադրութեան, ինչպէս Նաեւ տրամադրել թուրք արտադրողներու տուեալները, անոնց հետ պայմանագիրներու սկիզբն ու աւարտը:

Ծերակուտականները շեշտեցին, որ Թուրքիայէն մատակարարումներու մերժումը ամերիկեան կողմին համար պիտի ստեղծէ լրացուցիչ ֆինանսական ծախսեր, սակայն ատիկա պէտք է կատարուի «ՕԹԱՆ-ի նկատմամբ դիւանագիտական պարտականութիւնները կատարելու համար»:

Յիշեցնենք, որ Ռուսիան եւ Թուրքիան



2017 թուականին ստորագրած են ռուսական «Էս-400» հակաօդային պաշտպանութեան համակարգեր մատակարարելու մասին պայմանագիր: Թուրքիան ՕԹԱՆ-ի երկիրներէն առաջինն էր, որ ձեռք ձգեց այդ համակարգերը: Անգարայի որոշումը կտրուկ բացասական արձագանք յառաջացուց Միացեալ Նահանգներու եւ ընդհանուր առմամբ ՕԹԱՆ-ի կողմէ:

Միացեալ Նահանգներ չեն դադորի փորձել Թուրքիոյ ստիպել հրաժարելու Ռուսիոյ հակաօդային պաշտպանութեան համակարգերէն: Ատոր պատճառով Ուաշինկթըն վտարած է Անգարան ամերիկեան «ԷՖ-35» հալածիչներու արտադրութեան ծրագիրներէն: Բացի ատկէ, Միացեալ Նահանգներ կը սպառնան Թուրքիոյ դէմ շարք մը միակողմանի պատժամիջոցներու կիրարկումով, սակայն չեն շտապէր այդպիսի քայլերու դիմել, որովհետեւ կը վախնան ՕԹԱՆ-ի առանցքային դաշնակիցի հետ յարաբերութիւններու հետագայ սրումէն, իսկ Անգարան կը Նախագահուշացնէ, որ անպատասխան պիտի չձգէ այդպիսի սահմանափակումներու կիրարկումը:

«ՄՈՍԿՈՒԱՆ ԿՈՐԱՆՑՈՒՑԱԾ Է ՈՒԱՇԻՆԿԱԹԵՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎՍԱԳՈՒԹԻՒՆԸ»

Կ'ԸՍԷ ՌԻԱՊԵՈՎ

Ռուսիան Միացեալ Նահանգները չի տեսներ իբրեւ բանակցութիւններու ունակ գործընկեր եւ կորսնցուցած է վստահութիւնը: Այս մասին ռուսական «Իզ» կայքին հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկէյ Ռիապըով՝ մեկնաբանելով Բաց երկինքի մասին համաձայնագրի անդամ երկիրներու առցանց բանակցութիւնները:

Տեսաժողովը հրաւիրուած էր Միացեալ Նահանգներու՝ համաձայնագիրէն դուրս գալու որոշումին պատճառով:

Ռիապըով նշած է, որ վերջերս ամերիկեան կողմը հետզհետէ աւելի յաճախ կը հրաժարի իր պարտականութիւններու կատարումէն եւ դուրս կու գայ տարբեր համաձայնագիրներէն:

«Մենք կորսնցուցած ենք Միացեալ Նահանգներու նկատմամբ իբրեւ գործընկեր մեր վստահութիւնը, կ'երեւի պէտք է սկսիլ վերականգնել զայն», ըսած է Ռիապըով:

Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարարը աւելցուցած է, որ վստահութեան վերականգնումը միայն փոքր քայլերով ըլլալ:

Միացեալ Նահանգներու Նախագահ



Տանըլտ Թարմի 21 մայիսին յայտարարած էր, թէ իր երկիրը դուրս կու գայ Բաց երկինքի մասին համաձայնագիրէն: Որոշումը ուժի մէջ պիտի մտնէ վեց ամիսէն: Միացեալ Նահանգներու Նախագահը Նոյն ատեն չէ բացառած նոր համաձայնագիր կնքելու հաւանականութիւնը:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը Ուաշինկթընին կոչ ուղղած է՝ յոյս չունենալու, որ համաձայնագիրէն դուրս գալէ ետք իրենք պիտի շարունակեն ստանալ ատոր վերաբերեալ ամբողջական տեղեկութիւնը:

Բաց երկինքի մասին համաձայնագիրը կնքուած էր 1992 թուականին: Փաստաթուղթին համաձայն, համաձայնագիրի անդամ 34 երկիրները կրնան հետախուզական թռիչքներ կատարել իրարու տարածքին մէջ:

ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Այս տուեալներով երկրին մէջ մԷԿ միլիոն մարդու հաշուով արձանագրուած է 9882 դէպք: Ըստ այդ ցուցանիշին, Հայաստան աշխարհի մէջ 9-րդ դիրքին վրայ է՝ շրջանցելով Միացեալ Նահանգները, Իտալիան եւ Սլաւիան:

Աշխարհին մէջ մԷԿ միլիոնի բնակչութեան հաշուով վարակման դէպքերու քառր թիւեր ունի Զաթարը, Սան Մարիոն եւ Պահրէյնը՝ համապատասխանաբար 35.952, 20.571 եւ 17.525 պարագայով:

Ըստ <https://www.worldometers.info/coronavirus/>-կայքին, Միացեալ Նահանգներու, ուր արձանագրուած է վարակածներու շատ մեծ թիւ (3.041.129), մԷԿ միլիոն մարդու հաշուով վարակման դէպքերու թիւով 13-րդն է աշխարհի մէջ (9187):

Ինչ կը վերաբերի «Զորոնա»-էն մահացութեան պարագաներուն, ապա Հայաստանի մէջ արձանագրուած է մահուան 503 դէպք. այս ցուցանիշով Հայաստան այժմ 25-րդ դիրքին վրայ է աշխարհի մէջ:

ՃՈՐՃԻԱՅԻ ՆԱԿԱՆԳԱՊԵՏԸ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԻՒՆ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅԱԿԱԳՈՒՆԴԻ ՈՒԺԵՐԸ ԶՕՐԱՇԱՐԺԻ ԵՆԹԱՐԿԱԾ



Միացեալ Նահանգներու Ճորճիա Նահանգի Աթլանթա քաղաքին մէջ սկսած անկարգութիւններու պատճառով Նահանգապետ Պրայն Զեմի արտակարգ դրութիւն յայտարարած է եւ զօրաշարժի ենթարկած Ազգային պահակազուկի զինուորները: Այս մասին կը հաղորդէ «Սի.Էն.Էն»-ը:

Կը նշուի, որ քաղաքին մէջ վերահսկողութիւնը պիտի հաստատէ Ազգային պահակազուկի առնուազն հազար զինուոր:

Նահանգապետին համաձայն, իշխանութիւնները ստիպուած եղած են նման քայլերու դիմելու շաբաթավերջին տեղի ունեցած անկարգութիւններու եւ կրակոցներու պատճառով, որոնց իբրեւ հետեւանք արձանագրուած են հինգ զոհեր եւ երեսուն ուրիշներ վիրաւորուած են:

«Մեր Նահանգի մայրաքաղաքին մէջ ապօրինութիւնը պէտք է դադրեցուի, անհրաժեշտ է կարգուկանոն հաստատել: Ես արտակարգ դրութիւն յայտարարած եմ, որովհետեւ մեր քաղաքացիներու անվտանգութիւնը մեզի համար առաջնային նշանակութիւն ունի», ըսած է Նահանգապետը:

Մինչ այդ, ան Ազգային պահակազուկի օգնութեան դիմած էր մայիսին՝ Մինեսոթա Նահանգին մէջ ափրիկեցի-ամերիկացի ճորճ Ֆլոյտի սպանութենէն ետք սկսած զանգուածային բողոքի ցոյցերուն պատճառով:

Ճորճիայի մէջ անկարգութիւնները սաստկացած էին, երբ 12 յունիսին Աթլանթայի մէջ ոստիկանը ձերբակալութեան ժամանակ կրակեց եր ափրիկեցի-ամերիկացի Ռեյ-շարտ Պրուքսի վրայ: Բժիշկները չէին յաջողած փրկել վերջինիս կեանքը:

ՄԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐՏՈՐԱՐԸ «ԶՈՐՈՆԱ» ԺԱՅՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԵՆ ԵՏԸ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՐԿՈՒ ԲԵՄԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵԱԾ Է

« Զ ո Ր Ո Ն ա » ժաիրի համաճարակը խորացուցած է թէ՛ երկիրներուն մէջ, թէ՛ ալ պետութիւններու միջեւ յարաբերութիւններուն մէջ անհաւասարութեան առնչուած առանց այդ ալ բարդ իրավիճակը: Համաճարակի աւարտէն ետք աշխարհը պիտի ունենայ հետագայ զարգացման միայն երկու բեմագրութիւն: Այս մասին «Աֆթոնալաւեթ»-ի մէջ հրապարակուած յօդուածին մէջ յայտարարած է ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիօ Կուլիքերեցը:



Ան յօդուածին մէջ նշած է, որ թէեւ անկարելի է կանխատեսել ապագան, ան համաճարակի աւարտէն ետք աշխարհի զարգացման միայն երկու հաւանական բեմագրութիւն կը տեսնէ՝ լաւատեսական եւ յոռետեսական:

Ընդհանուր քարտուղարին կարծիքով՝ այդ ուղիներէն վատագոյնը կ'ենթադրէ համաշխարհային անկում, որ պիտի ուղեկցուի խտրականութեամբ եւ այլատեսացութեամբ:

«Եթէ այս բեմագրութիւնը կեանքի կոչուի, մենք պիտի տեսնենք, թէ ինչպէ՞ս կը սաստկանան խտրականութիւնը, ամբոխավարութիւնը եւ այլատեսացութիւնը: Իւրաքանչիւր երկիր ինքնուրոյն պիտի գործէ կամ այսպէս կոչուած համախմբումներու մէջ, որոնք կ'ուզէ համագործակցիլ միայն որոշ շօշափելի խնդիրներու շուրջ», նկատած է ան:

Լաւատեսական դիպաշարն ալ կ'ենթադրէ ընդհանուր վերականգնման եւ զարգացող պետութիւններուն օգնութիւն տրամադրելու յաջող ծրագիր:

Անոր համաձայն, այդ բեմագրութեան կեանքի կոչման պիտի օգնեն յառաջիկայ ինը ամիսներու ընթացքին «Զորոնա» ժաիրի դէմ արդիւնաւետ եւ մատչելի պատուաստանիւթի ի յայտ գալը:

«Եթէ ատիկա տեղի ունենայ, իսկ տնտեսութիւնը աստիճանաբար վերականգնուի, մենք պիտի սկսինք շարժիլ ճիշդ ուղղութեամբ եւ երկու-երեք տարի ետք որոշ չափով պիտի վերադառնանք բնական վիճակին», նշած է Կուլիքերեցը:

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին համաձայն, առաջմ դժուար է հասկնալ, թէ աշխարհը ո՞ր ուղղութեամբ կը շարժի, սակայն անհրաժեշտ է ամեն ինչ ընել առաջին բեմագրութենէն խուսափելու եւ երկրորդ բեմագրութեամբ շարժելու համար: